ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

ԹԻՎ ՍՑ-ԷՍ-2019/27

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 31.01.2019թ. թիվ 27/26-3/1304-18 գրությամբ «ԽՈՌՆԴԱՏ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 03313527) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 10.01.2019թ. թիվ 05-01 և 23.01.2019թ. թիվ 07-01 գրությունների հիման վրա, 31.01.2019թ. նախաձեռնել է «ԽՈՌՆԴԱՏ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. «Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ը 10.01.2019թ. թիվ 05-01 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ը տեղեկացնում է, որ 24.12.2019թ. գնանշման հարցման միջոցով անցկացված «ԼԽՈՒԵ-ԳՀԱՊՁԲ-2019/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում 1-ին տեղ զբաղեցնող մասնակից «ԽՌՆԴԱՏ» ՍՊԸ-ն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և ընթացակարգի հրավերով սահմանված կարգով երեք աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Նոռա Ղազարյանը:

3. «ԽՌՆԴԱՏ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը դիմել է «ԽՌՆԴԱՏ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն ընձեռելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.01.2019թ. թիվ 27/26-3/1304-18 գրությամբ Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Զավեն Հարությունյանը:

4. ՍՑ-ԷՍ-2019/27 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 31.01.2019թ. թիվ 27/26-3/1304-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Երևանի լողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ը 10.01.2019թ. թիվ 05-01 և 23.01.2019թ. թիվ 07-01 գրությունները, «ԼԽՈՒԵ-ԳՀԱՊՁԲ-2019/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԼԽՈՒԵ-ԳՀԱՊՁԲ-2019/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 24.12.2018թ. թիվ 3, 24.12.2018թ. նիստի թիվ 4 և 24.12.2018թ. նիստի թիվ 5 արձանագրությունները, «ԽՈՆԴԱՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը.

«Երևանի լողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԼԽՈՒԵ-ԳՀԱՊՁԲ-2019/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «ԽՈՆԴԱՏ» ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 3 հավելվածով՝ ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԼԽՈՒԵ-ԳՀԱՊՁԲ-2019/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովի 24.12.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի «զ» ենթատով որոշել է «ԽՈՆԴԱՏ» ՍՊԸ-ին ճանաչել Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 2-րդ, 31-րդ, 37-րդ, 48-րդ, 51-րդ, 53-րդ, 54-րդ և 56-րդ չափաբաժինների մասով՝ որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

«Երևանի լողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ը 25.12.2018թ. թիվ 215-01 գրությամբ «ԽՈՆԴԱՏ» ՍՊԸ-ին տեղեկացրել է, որ

վերջինս Ընթացակարգի 2-րդ, 31-րդ, 37-րդ, 48-րդ, 51-րդ, 53-րդ, 54-րդ և 56-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից և առաջարկել է ներկայացնել որակավորումը հիմնավորող Հրավերով սահմանված թաստաթղթերը:

Այնուհետև, 11.01.2019թ. կայացած նիստի N 8 արձանագրության 4-րդ կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «ԽՈՌՆԴԱՏ» ՍՊԸ-ի կողմից օրենքով սահմանված ժամկետներում չեն ներկայացվել որակավորման չափանիշները, և ոչ մի արձագանք կամ առարկություն չի ներկայացվել նշված կազմակերպության կողմից:

Ելնելով վերոգրյալից, Հանձնաժողովը որոշել է Ընկերության հայտը մերժել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին

մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)

- 32-րդ կետի 1-ին ենթակետի բ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և

փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

«Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԼԽՈՒԵ-ԳՀԱՊՁԲ-2019/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի՝

- 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 7.12 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.12-ից 7.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:
- 7.15 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով,

գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ԽՈՌՆԴԱՏ» ՍՊԸ-ն ճանաչվել է Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 2-րդ, 31-րդ, 37-րդ, 48-րդ, 51-րդ, 53-րդ, 54-րդ և 56-րդ չափաբաժինների մասով՝ որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

- «Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ը 25.12.2018թ. «ԽՈՌՆԴԱՏ» ՍՊԸ-ին տեղեկացրել է, որ վերջինս Ընթացակարգի 2-րդ, 31-րդ, 37-րդ, 48-րդ, 51-րդ, 53-րդ, 54-րդ և 56-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից և առաջարկել է ներկայացնել որակավորումը հիմնավորող Հրավերով սահմանված փաստաթղթերը:

- Սահմանված ժամկետներում Ընկերությունը չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը, ինչի արդյունքում գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերությունը՝ «ԼԽՈՒԵ-ԳՀԱՊՁԲ-2019/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերով պահանջվող որակավորումը հիմնավորող փաստաթղթերը սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոգրյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «ԽՈՌՆԴԱՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 31.01.2019թ. թիվ 27/26-3/1304-18 գրությամբ «ԽՈՆԴԱՏ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 03313527) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «ԽՈՆԴԱՏ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ